

Համարը N 219

Տիպը Որոշում

Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ 2006.05.08/13(22)

Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն

Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.05.2006

Տեսակը Մայր

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Ստեփանակերտ

Ընդունման ամսաթիվը 26.04.2006

Ստորագրման ամսաթիվը 26.04.2006

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

**Կապեր այլ փաստաթղթերի հետ**

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

"26" ապրիլի 2006թ.

N 219

ք.Ստեփանակերտ

**ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) թափոնների անձնագրավորման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

բ) թափոնի անձնագրի տիտղոսաթերթի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետին՝ սույն որոշման պաշտոնական հրապարակումից հետո եռամսյա ժամկետում հաստատել թափոնի անձնագրի օրինակելի ձևը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՂՀ վարչապետ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված 1  
ԼՂՀ կառավարության  
«26» ապրիլի 2006թ.  
թիվ 219 որոշման

**Կ Ա Ր Գ**

**ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կանոնակարգվում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից (այսուհետ՝ թափոններ արտադրող) վտանգավոր թափոնների անձնագրի (այսուհետ՝ անձնագիր) կազմման, համաձայնեցման և հաստատման հետ կապված հարաբերությունները:

2. Վտանգավոր թափոնների անձնագրավորումն իրականացվում է ռեսուրսների խնայողության ու վտանգավոր թափոնների անվտանգ գործածությունն ապահովելու նպատակով և հիմք է հանդիսանում անձնագրավորվող թափոնների հետ կապված տեխնոլոգիական, տնտեսական, իրավական և այլ որոշումների ընդունման համար, մասնավորապես, կապված շրջակա միջավայրի պահպանության պահանջների կատարման, թափոնների անդրսահմանային փոխադրման կարգավորման, թափոնների տեղադրման համար բնապահպանական վճարի օբյեկտ հանդիսացող ծավալների հաշվառման և (կամ) հաշվարկման, ինչպես նաև

բնապահպանական իրավախախտումների համար համապատասխան պատժամիջոցների կիրառման, արտադրանքի արտադրության համար որպես երկրորդային հուճք թափոնների օգտագործման անհրաժեշտ և նպատակահարմար միջոցների ձեռնարկման, թափոնների վերամշակման նպատակահարմարության հետև և այլն:

3. Անձնագիրը պետք է նպաստի թափոնների տեղափոխման, ինչպես նաև անդրսահմանային փոխադրումների ժամանակ տեխնիկական արգելքների վերացմանը:

4. Անձնագիրը ներառում է թափոններ արտադրողի մոտ գոյացող վտանգավոր թափոնների (այսուհետ՝ թափոն) տեսակի, քանակի, վտանգավորության աստիճանի, դրանց կազմի և ռեսուրսային ու հումքային հիմնական հատկությունների մասին տեղեկություններ:

## II. ԱՆՁՆԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

5. Անձնագիրը կազմում են թափոններ արտադրողները:

Անձնագիրը հաստատում է տվյալ թափոններն արտադրող իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը և, համաձայն «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի, համաձայնեցնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության հետ (այսուհետ՝ լիազոր մարմին):

6. Անձնագիրը կազմվում է յուրաքանչյուր տեսակի թափոնի համար՝ սույն կարգի 12-րդ կետով սահմանված բովանդակության համաձայն:

7. Անձնագիրը համաձայնեցվում է այն լիազոր մարմին մուտքագրվելուց հետո 30-օրյա ժամկետում և գրանցվում գրանցամատյանում:

8. Սույն կարգի 12-րդ կետով սահմանված անձնագրի բովանդակության թերի լինելու կամ անճշտությունների առկայության դեպքում անձնագիրը վերադարձվում է լրամշակման: Կրկնակի ներկայացված անձնագիրը համաձայնեցվում է սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում:

9. Անձնագիրը համաձայնեցվում և հաստատվում է թափոնի անձնագրի տիտղոսաթերթի ձևին համապատասխան:

10. Եթե թափոններ արտադրողն ստացել է լրացուցիչ կամ նոր տեղեկություններ տվյալ թափոնի մասին, ապա անձնագիրը ենթակա է վերահաստատման՝ սույն կարգով սահմանված ընթացակարգով:

11. Անձնագիրը համաձայնեցվում և հաստատվում է 2 օրինակից, որի մեկ օրինակը հաստատումից հետո ուղարկվում է լիազոր մարմին:

## ԱՆՁՆԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

12. Անձնագիրը պետք է ներառի հետևյալ պարտադիր տվյալները՝

- ա) թափոնի անվանումը,
- բ) կազմակերպության անվանումը և տվյալները,
- գ) թափոնի ծածկագիրը,
- դ) անձնագրավորվող թափոնի քանակությունը,
- ե) թափոնի վտանգավոր հատկությունների ցանկը,
- զ) թափոնի ծագումը (ըստ տեխնոլոգիական կանոնակարգի),
- է) թափոնի կազմը և դրա բաղադրիչների թունոնակությունը,
- ը) թափոնի վնասագերծման կամ վերամշակման համար առաջարկվող եղանակը,
- թ) թափոնի հրդեհապայթյունավտանգությունը,
- ժ) թափոնի կոռոզիոն ակտիվությունը,
- ժա) թափոնի ռեակցիայի մեջ մտնելու ունակությունը,
- ժբ) անհրաժեշտ նախազգուշական միջոցները թափոնի գործածության ժամանակ,
- ժգ) թափոնի տեղափոխման սահմանափակումները,
- ժդ) լրացուցիչ տեղեկություններ,
- ժե) թափոն արտադրողի հայտարարությունը:

**ԼՂՀ կառավարության  
աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Ս. Գրիգորյան**

ՁԱ

**ԹԱՓՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

**ԱՆՁՆԱԳԻՐ N -----**

(վտանգավոր թափոնի անվանումը)

(ծածկագիրը)

(թափոններ արտադրողի՝ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը,

անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝**

(թափոններ արտադրողի՝ իրավաբանական անձի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

200 թ.

**Կ. Տ.**

**ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ՝**

Լիազոր մարմնի ղեկավար

(պաշտոնը)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

200 թ.

**Կ. Տ.**

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Ս. Գրիգորյան**